



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ՝
««ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ» ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
19.02.2015թ. ԹԻՎ 05/9-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեժլումյանի, Հարություն Հարությունյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Սիմոն Բաբայանի և Տիգրան Խուրշուդյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի՝ ««Փաստաբանի օր սահմանելու» հարցը քննարկելու մասին» 19.02.2015թ. թիվ 05/9-Լ որոշումն (այսուհետ՝ Որոշում) ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ խորհրդի անդամների միաձայնությամբ ընդունված Որոշմամբ, ապրիլի 25-ի՝ որպես փաստաբանի օրվա նշումը տարակարծություն է առաջացրել փաստաբանների շրջանում,

հաշվի առնելով նաև նշված տարակարծությունները վերացնելու կապակցությամբ Պալատի նախագահի կողմից ներկայացված առաջարկն առ այն, որ «Փաստաբանի օրը» պետք է սահմանվի Պալատի ընդհանուր ժողովի որոշմամբ, որի հիմքում ընկած կլինի փաստաբանների մեծամասնության դիրքորոշումը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջներով, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի՝ ««Փաստաբանի օր սահմանելու» հարցը քննարկելու մասին» 19.02.2015թ. թիվ 05/9-Լ որոշումը ճանաչել ուժը կորցրած:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

01 ապրիլի 2016թ.
թիվ 09/17-Լ
ք. Երևան